ստամոքս հիւանդին պահանջէ, կամ զայն ինչ ուտել, զոր ախորժակ նորա ստիպէ, կամ որ դեռ չէ մարսեալ զառաջին ճաշն։

Ի վերջոյ, պարտ և արժան համարիմ ծանուցանել և զայս մի ինչ. զի եթէ՝ ի ջերմախտութեան և եթէ յայլ հիւանդութեան, մի՛ ոք իշխեսցէ առնուլ՝ ի համբաւեալ դեղոց անտի, զորս ոմանք՝ ի սուտանուն բըժշկաց՝ ի յօգուտ անձանց հնարեալ են վասն հարիւրաւոր տեսակ հիւանդութեանց և տարածեալ յամենայն տեղիս, որք են դեղահատք, փոշի, ոգի, օշարակ, ջուր, օծանելիք և այլն։ Զի որպէս ծանուցաք՝ ի վերանդր, չիք հիւանդութիւն որ չունիցի զիւր յատկացեալ պատճառ, և ոչ պատճառ իրիք հիւանդութեան՝ որ չունիցի զիւր նշանն. և ամենայն հմուտ բժիշկ նախ ցանկայ իմանալ զպատճառ հիւանդութեան և այնու զերեւելի նշանն, և ապա յարմարէ զդեղ։ Այլ այսպիսի դեղք մարթին՝ ի միոյ պատճառէ գոյացեալ հիւանդութեան օգնել, այլ՝ ի միւս պատճառէ յառաջ եկեալ մի և նոյն տեսակ հիւանդութեան՝ ոչ. վասն որոյ բազում՝ զոր անմտութեամբ հետեւեալ են այսպիսի դեղոց, ոչ միայն շահեալ են և ոչինչ, այլ և կորուսեալ են զկեանս պէսպէս չարաչար ախտիւք որպէս՝ ի ժամանակս մեր պատահեցաւ իսկ, զի քանիք ոմանք՝ ի մերոցանէ՝ յաճախեալ՝ ի սոյնպիսի դեղոց՝ կորուսին զկեանս ջրգողութիւն, ծիւրական և կաթուածական ախտիւ։

Մինչդեռ արդիւնաւոր և կարի օգտաւէտ դեղ ջերմախտութեան, զոր գտեալ են բժիշկք և առհասարակ՝ ի կիր առնուն՝ ի սոյն հիւանդութիւն, և քաղեն իսկ օգուտ մեծ, է ֆոֆինայն (ֆրնաֆրնա) զոր ասեն ամենայն տեսակ ջերմախտութեան, եթէ փոշին և եթէ դեղահատն այնորիկ. զայս դեղ գիշեր և ցերեկ կարգաւ յերկուս կամ յերիս ժամն անգամ մի տան հիւանդին՝ ի միոյ մինչեւ ցերիս գրէնս առանգամն, ըստ հասակի և ըստ կաղամուածոյ հիւանդին։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ստանայէն եկած հետեւեալ նամակը ընթերցողաց ուշադրութեան կը ներկայացընենք։

. . . . . Այս, որ գրեթէ մեր աղդի նկատմամբ Տրովադա մը դարձած էր՝ մանաւանդ այս մօտ տարիներս, և զանազան բանակռուութեանց ու աղէտից պատկեր եղած, այժմ ազգի և վիճակայնոց համահաճ քուէարկութեամբ վերջապէս լուծուեցաւ իւր մահատիպ կապանքներէն, և Աստուած բարձրացուց զանի իւր ստորնութենէն, և յիշեալ սուրբ Աթոռը ունեցաւ վերջապէս իւր արժանաժառանգ գահակալը Տ. Տ. Մկրտիչ Ա. Վեհափառ Կաթողիկոսը. սակայն հարկ է արդեօք միայն կաթողիկոս մը ունենալով բաւականանալ, ո՛չ, ո՛չ. հարկ է արդեօք միայն Վանք ունիմք Ասոյ մէջ լսելով գոհ ըլլալ, դարձեալ ո՛չ։

Եգիպտոսի բուրքերն ինչ անուն և վարկ որ կրնան բերել հին Եգիպտացւոց, անշուշտ նոյն օգուտը պիտի բերէ յիշեալ փառաղիրկ Աթոռն մեր Աղգին և Կիլիկիոյ։ Մեկը եթէ կարծէ Աղգին շահը լոկ քարի փայտի և նիւթի մէջ գտնել, կը սխալի. սակ Աթոռը այն օգուտը չի կրնար բերել զոր Աղգը կը յուսայ։

digitised by A.R.A.R.@

Մենք, որ Աստանայի հարիւրաւոր ուխտաւորաց հետ եւ անձնանուէր ընկերութեան անդամներէն շատերը ականատես եղանք նոյն վանքին, չեմք կարող առանց արտասուաց նկարագրել. մէկը՝ պարտի ականատես ըլլալ՝ որպէս զի քաջ վերահասու ըլլայ վանքին նիւթական և բարոյական թշուառութեանց։

Թողուած Գրիգոր Ռ. Վ. կայասիրի օրէն 'ի վեր Կիլիկիոյ կրած անտանելի թշուառութիւնը, որ օտար ձեռքերէ նիւթեցաւ, և եթէ պահմի այս մոտերս տասնամեայ շրջանին վրայ ակնարկ մի ձգեմք, այն ատեն ստուգիւ կը տեսնեմք, որ Աթոռի ողորմելի վիճակին սկզբնաւորութիւնը Աղգի մէջ եղող մերձաւոր ձեռքերն եղած են, որով այսօր Աթոռին միայն ստուերը մնացած է։ Բանզի նոյն իսկ Սսեցիք և համանուն վանքի միաբանութիւնը ըստ վանքն իբրեւ զմի գամ ոչնարաց նկատած են, և այն ոչ որպէս պարան է։ Մինթէ անձնական շահն անգամ չէր պահանջեր, որ գէթ Սսոյ համար Սրոյ վանքը պահէին. պահած են այո, ինչպէս սոմեալ ֆենդանին կը պահէ հօտ մը իւր քաղցը յապեցնելու։

Այս օրուան օրս վանքը ճիշտ Ադոնիան մեծարան մը դարձած է իւր դրիւք. բայց երանի թէ գէթ արժանաւոր մեծակեացներ ունենար։ Ինչուարդեօք Սսեցին պահ մը իրար անցաւ, վասն զի քաջ նկատեց որ իւր դերը չը պիտի կրնայ կատարել, դերասաններն օգի 'ի բուն իբր օրհասական երեւեցան և այն օտար արտորդաց թելադրութեամբ չը խելամտեցին թէ օտարն միշտ է օտար։

Արդարեւ յիշեալ վանքի ահեղ տեսքը մինչև այս վիճակին հասնելուն հանդերձ, դարձեալ իւր խորհրդաւոր սրբութեամբն ու վաղեմի հակայաձեւութեամբ զարմանք միանգամայն և արտմութիւն կ'ազդէ տեսնողներուն. այո, տեսնալ պէտք է Կիլիկիոյ մէջ մեր Նախահարց ձեռագործները թէ և կիսակործան, և ապա ոչչալ զանիկա և իբրեւ երկրորդական Հայրենիք նը կատարել....։

Արդ՝ Սրբազան միւռոնի հանդէսը պատուելու փութացող ուխտաւորը յամենայն կուսէ եկած էին, այսինքն Տիգրանակերտէն, Մելիտինէէն, Բարբերթէն, Եդեսիայէն, Կեսարիայէն, Մալաթիոյ, 'ի Հաճնոյ, Գերմանիկէն, Աղշէհիրէն, Աստանայէն և յայլոց զանազան տեղեաց, և այսպէս Սուրբ Միւռոնի օրհնութիւնը հինգ հազարէն աւելի ուխտաւորաց ներկայութեան կատարեցաւ 'ի Այիս ինը առանց ճիկ մը հանելու, խաղաղ և վայելուչ կերպիւ։ Կային ուխտաւորաց մէջ նաև շատ քահանայք, վարդապետք և մի քանի Արք-եպիսկոպոսք։ Դարպասական ողորմութիւնը հազիւ վերծուն հազարի հասաւ, քանզի Սրոյ վանքը հիւր պատսպարելու համար հազիւ երեսնի չափ սենեակ ունի, իսկ մնացեալ երեսունէն աւելին բոլորն ալ խարխուլ և փլած են. ուստի ժողովուրդն ստիպուեցաւ վրաններու մէջ և Սսեցւոց տունները նստիլ, ահա այս պատճառաւ ամենք իրենց ողորմութիւնը տալու զանց ըրին։ Ուրիշ տաւորք ընդհանրապէս երկու բանէ փոքր մի նեղուեցան, մէկը սենեակներու. իսկ միւսը ջուրի համար, ինչուորջուրը հինգ կամ տասն բոպէի չափ հեռի է վանքէն։ Վանքը օրինաւոր հոգեւորուն, հիւրընկալ և այլն և այլն չկայ, բայց ասկէ վերջը ըլլալու յոյս կայ Զունի նաև արդիս միաբանութիւն. օրինաւոր մարդու խիստ կարօտ, կարօտ նաև դրամոյ. այս երկու նիւթական ու բարոյական կարողութեանց պակաս-

digitised by A.R.A.R.@

սութիւնը խոշընդոտն է ամեն բանի, վասն որոյ Վեհափառ Ս. Կաթողիկոսի ուշը գրաւող առ այժմ այս երկու կէտերն են, այսինքն օրինաւոր և բանիբուն միաբանութիւն և դրամ, որք ըստ ամենայնի նախնական և ամենակարեւորներն են, առանց որոց բարեկարգութիւն անհնարին է։ Ուստի այս մասին Ազգային Կեդրոնական Վարչութիւնը խորհելու եւ Վեհափառ Կաթողիկոսին աջակցելու կարի պարտաւոր է, վասն զի եթէ գործը միայն Ս. Կաթողիկոսին թողու, և սա եւս իւր յոյսը վիճակայնոց, մեծապէս կը սխալին թէ Ազգ. Վարչութիւնը և թէ Ս. Կաթողիկոսը։ Ս. Աթոռոյն վերանորոգման համար սատարը ոչ թէ Կիլիկիոյ վիճակային սահմանաց մէջ. այլ սահմանէն դուրս բնտռել հարկ է անշուշտ՝ եթէ Ազգը Սսոյ վանուց վերանորոգութեան փափաքող է, ապա թէ ոչ՝ ի զուր է ամեն ջանք։ Եթէ մի այն Տաճկաստանի Հայք անձնիւր մարդ մէկմէկ դահեկան վճարէ, յայտնի է որ Ս. Երուսաղէմ թէ պարտքէ կ'ազատի և թէ դարպասական ողորմութիւն պահանջելէ, նոյնպէս և Սսոյ վանուց համար մտածել հարկ է, քանզի եթէ այսպիսի մի ընդհանրական նուէր անկորուստ եւ անցրիւ . . . . . հաւաքել հնար լինի, երկու վանքերն ալ խապառ կ'ազատին Ալեքսանդրի ձեռք նայելէ, ինչպէս էին հին ատենները մեր վանքերուն շատերը։ Իսկ Սսեցւոց մասին եթէ կ'ուզէ մէկը գաղափար մը ունենալ, եթէ Երուսաղէմ գնացած է, թող Ռեթղեհէմի հայերն ի միտ ածէ, թէ և անոնք շատեր հայերէն գիտնալէ զատ մէկ երկու լեզու եւս կը խօսին, իսկ Սսեցիք մայրենի լեզուէն անդամ չգիտեն, և քաղաքավարութեան նկատմամբ Սսեցիք Ռեթղեհէմցւոց բոլ նշանակութիւն չունին. նստած տուներին ցած, ձեւ և անկանոն, ընդ ամենը 1200 տունի չափ, մանաւանդ փողոցներ ուղղութիւնը և ժահահոտութիւնը կարի չափազանց է։

Բաց ի վանքէն Սսոյ մէջ կայ երկու Եկեղեցի եւս, որոց մին փլած է, . . . ։ Ահա այս ամեն ուրախական և տրտմական առարկաներով լի տեսարանը նկատելէ զինի ներհակ զգացումք ներով վարակուած դարձայ իմ պաշտօնատեղիս Յաֆայ . . . ։

1872 Մայիս 18 * * *

Ասոնց։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամսոյս 13ին Օգոստափառ Սուլթանին Գահակալութեան տարեդարձը կատարուեցաւ շքեղ հանդիսիւ, ուր բաց ի սովորական լուսաւորութենէն կատարեցաւ նաեւ զինուորական կրթութիւն և հրախաղութիւններ, որուն հանդիսատես գրաւնուեցան Կառավարչի հրաւիրմամբ տեղւոյս Ս. Պատրիարքունք, Հիւպատոսք և ուրիշ նշանաւոր անձինք։

—Ս. Երուսաղէմ, որ մինչ ցարդ Դամասկոսի Կուսակալութիւն կը պատկանէր, այժմ առանձին Կուսակալութեան փոխուեցաւ, որուն Կուսակալ որոշուած է Վ. Միւրիէ փաշան, որուն մօտ օրերս կը սպասուի։

—Բաղդադի մէջ մի հարուստ Հրէի դրամոց և այլ թանկագին գոհարեղէնաց արկղը գողցուեցաւ, բայց զինի

digitised by A.R.A.R.@